Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

# ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ*

## *Ս Վ Ա Զ Ի   Վ Ի Լ Ա Յ Ե Թ*

| | | | ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գրասենյակի №-ը | Կարգի №-ը | Ինչի՞ մասին է գրված | Բովանդակության համառոտագիրը | Կազմողը | Պետը | Սևագրության թվականը | Մաքրագրության թվականը |
| 66 | 1974 | | | | | 1330 թ. փետրվարի 16 | 1330 թ. փետրվարի 16 |

Արդարադատության և դավանանքների
բարձր մինիստրության

*Սվազի վիլայեթի Դիվրիկի կազայում և Հարակից մասերում գտնվող և կայսերական ֆերմանով չհաստատված 20 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն օրենքի, անհրաժեշտ կարգադրությունն անել։*

### Դ Ի Վ Ր Ի Կ

*Առանց ֆերմանի՝ 20։*
*Կցված է 1330 թ. փետրվար 12-ի № 1974 թաքրիրին։*

Կառուցման թ.

1. *Սվազի վիլայեթի բուն Դիվրիկ քաղաքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1268 թ.։*
2. *Սվազի վիլայեթի բուն Դիվրիկ քաղաքում Ս. Առաքելոց եկեղեցին, 1259 թ.։*
3. *Դիվրիկի կազայի Արմողալ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1311 թ.։*
4. *Դիվրիկի կազայի Քորեսին գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1270 թ.։*

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի №№ Ա-ից, Բ—Գ—Դ-ից, Ժ-ից և 1966 թվականի № Բ-ից։

5. Դիվրիկի կազայի Փարղամ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1249 թ.։
6. Դիվրիկի կազայի Օտուր գյուղում Ս. Թովմաս եկեղեցին, 1258 թ.։
7. Դիվրիկի կազայի Աշոն գյուղում Մոգ թագավոր եկեղեցին, 1248 թ.։
8. Դիվրիկի կազայի Ս. Հակոբ գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, Հնուց։
9. Դիվրիկի կազայի Փալանղա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, Հնուց։
10. Դիվրիկի կազայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 597 թ.։
11. Դիվրիկի կազայի Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքում Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, 597 թ.։
12. Դիվրիկի կազայի Սենջան գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1315 թ.։
13. Դիվրիկի կազայի Փենգյան գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1251 թ.։
14. Դիվրիկի կազայի Փենգյան գյուղում Ս. Երեքմանուկ եկեղեցին, Հնույ։
15. Դիվրիկի կազայի Փենգյան գյուղում Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1209 թ.։
16. Դիվրիկի կազայի Ջեմարե գյուղում Ս. Երրորդություն եկեղեցին, 1254 թ.։
17. Դիվրիկի կազայի Ջեմարե գյուղում Ս. Մանուկ եկեղեցին, Հնուց։
18. Դիվրիկի կազայի Միրվանա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1259 թ.։
19. Դիվրիկի կազայի Կորնավիշ գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1255 թ.։
20. Դիվրիկի կազայի Քեսմե գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1328 թ.։

## ՍՎԱԶԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

| Գրասենյակի №-ը | Կարգի №-ը | Ինչի՞ մասին է գրված | Բովանդակության համառոտագիրը | Կազմողը | Գինը | Սևագրության թվականը | Մաքրագրության թվականը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 303<br>557 | 1990 | | | | | 1330 թ. փետրվարի 16 | 1330 թ. փետրվարի 16 |

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Սվազի վիլայեթում Քերուն կազային կից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված հինգ եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցույց տվող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն օրենքի, հարկ եղած կարգադրության մասին Ձեր միջնորդությունը։

### ՔԵՐՈՒՆ

Առանց ֆերմանի՝ 5։

Կցված է 1330 թ. փետրվար 16-ի № 1190 թաքրիրին։

557
303

Կառուցման թ.

1. Սվազի վիլայեթի Քերուն կազայի Դենգիլ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, Հնուց։
2. Սվազի վիլայեթի Քերուն կազայի Էլաքեյլ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, Հնուց։
3. Սվազի վիլայեթի Քերուն կազայի Յափալթոն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1116 թ.։
4. Սվազի վիլայեթի Քերուն կազայի Թեմեջիք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1251 թ.։
5. Սվազի վիլայեթի Քերուն կազայի Քիքի գյուղում Ս. Նիկողայոս եկեղեցին, 1205 թ.։

# ՍՎԱԶԻ ՎԻԼԱՅԵԹ

**ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ**

| Գրասենյակի №-ը | Կարգի №-ը | Ինչի՞ մասին է գրված | Բովանդակության համառոտագիրը | Կազմողը | Գները | Սևագրության թվականը | Մաքրագրության թվականը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 100<br>288 | 1977 | | | | | 1330 թ. փետրվարի 16 | 1330 թ. փետրվարի 16 |

Արդարադատության և դավանանքների
մինիստրության

*Սվազի վիլայեթի Ամասիա սանջաքում և նրան հարակից վայրերում գտնվող կայսերական ֆերմանով հաստատված հինգ եկեղեցիների անուններն ու կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված 7 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցույց տվող ցուցակը երկու օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն օրենքի, անհրաժեշտ կարգադրության մասին Ձեր միջնորդությունը։*

## ԱՄԱՍԻԱ

*Ֆերմանով՝ 5։*
*Նշված է 1330 թ. փետրվար 12-ի № 1977 թղթերին։*

Կառուցման թ.

1. *Բուն Ամասիայի սանջաքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1218 թ. զիլզադեի կեսին։*
2. *Բուն Ամասիայի սանջաքում Ս. Հակոբ եկեղեցին, 1255 թ. շեվվալի կեսին։*
3. *Բուն Ամասիայի սանջաքում Ս. Նիկողայոս եկեղեցին, 1218 թ. զիլզադեի կեսին։*
4. *Ամասիայի սանջաքի Քյոփրի կաղայում Ս. Գևորգ եկեղեցին, 1215 թ. զիլգադեի կեսին։*
5. *Ամասիայի սանջաքի Լադիք կաղայում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1254 թ. ջեմազ-ուլ-էվվելի կեսին։*
6. *Ամասիայի սանջաքի Մեջիդ-օզի կաղայում Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
7. *Ամասիայի սանջաքի Մերզիֆուն կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
8. *Ամասիայի սանջաքի Քորքյոյ գյուղի մոտ Ս. Աստվածածին վանքում Ս. Աստվածածին եկեղեցին, 1290 թ.։*
9. *Ամասիայի սանջաքի Մերզիֆուն կաղայի Ենիջե գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1320 թ.։*
10. *Ամասիայի սանջաքի Հեզե կաղայի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։*
11. *Ամասիայի սանջաքի Կյումուշ Հաջիքյոյի կաղայում Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
12. *Ամասիայի սանջաքի Կյումուշ Հաջիքյոյի կաղայի Կյումուշ-Մադենի գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1320 թ.։*

# Թ Ո Ք Ա Դ

**ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ**

| Գրասենյակի №-ը | Կարգի №-ը | Ինչի՞ մասին է գրված | Բովանդակության համառոտագիրը | Կազմողը | Գները | Սևագրության թվականը | Մաքրագրության թվականը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1760 | 2096 | | | | | 1331 թ. հունիսի 3 | 1331 թ. հունիսի 3 |

Արդարադատության և դավանանքների
մինիստրության

*Թոքադի սանջաքում և նրան հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված տասնհինգ եկեղեցիների, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված 17 եկեղեցիների վերաբերյալ երկու օրինակ ցուցակը սրա հետ ներկայացնում ենք Ձերդ Բարձրությանը։ Այդ մասին հրամանն ու ֆերմանը Ձերդ Վսեմության է։*

## Թոքադի սանջաքում և նրան հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված եկեղեցիների ցուցակը

Կառուցման թ.

1. Բուն Թոքադում Ս. Աստվածածին եկեղեցին։
2. Բուն Թոքադում Ս. Մինաս եկեղեցին։
3. Բուն Թոքադում Ս. Երրորդություն եկեղեցին։
4. Բուն Թոքադում Ս. Ստեփանոս եկեղեցին։
5. Բուն Թոքադում Ս. Լուսավորիչ եկեղեցին։
6. Բուն Թոքադում Ս. Գևորգ եկեղեցին։
7. Բուն Թոքադում Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին։
8. Թոքադում Ս. Հովակիմ մայրավանքում Հայոց եկեղեցին։
9. Թոքադում Ս. Հովհան Ոսկեբերանի վանքում Հայոց եկեղեցին։
10. Թոքադի սանջաքի Քարվանսարայ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին։
11. Թոքադի սանջաքի Բոսկունջիք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին։
12. Թոքադի սանջաքի Էնդիլ գյուղում Ս. Փրկիչ եկեղեցին։
13. Թոքադի սանջաքի Ջիլե գյուղում Ս. Հակոբ եկեղեցին։
14. Թոքադի սանջաքի Հրեք կազայում Ս. Ստեփանոս եկեղեցին։
15. Թոքադի սանջաքի Նիքսար կազայում Ս. Աստվածածին եկեղեցին։

## Թոքադի սանջաքում և նրան հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակ

Կցված է 1331 թ. Հունիս 2-ի № 2096 թաքրիրին։

Կառուցման թ.

1. Թոքադի սանջաքի Ջիֆթլիք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1247 թ.։
2. Թոքադի սանջաքի Բոլոս գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց։
3. Թոքադի սանջաքի Գետաղազ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1262 թ.։
4. Թոքադի սանջաքի Քարվանսարայ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
5. Թոքադի սանջաքի Յարթմիշ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1273 թ.։
6. Թոքադի սանջաքի Թահթիրա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1277 թ.։
7. Թոքադի սանջաքի Վարաղ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1326 թ.։
8. Թոքադի սանջաքի Գրիգորիս գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1264 թ.։
9. Թոքադի սանջաքի Գրիգորիս գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
10. Թոքադի սանջաքի Հրեք կազային կից Աղայաղի գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1290 թ.։
11. Թոքադի սանջաքի Հրեք կազային կից Ջիբրայիլ գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1316 թ.։
12. Թոքադի սանջաքի Հրեք կազային կից Ջոչխոտ գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1274 թ.։
13. Թոքադի սանջաքի Հրեք կազային կից Այվազե գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1294 թ.։
14. Թոքադի սանջաքի Հրեք կազային կից Սկարհալ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1306 թ.։
15. Թոքադի սանջաքի Հրեք կազային կից Սարը-կայա գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1296 թ.։
16. Թոքադի սանջաքի Նիքսարի կազային կից Կափու-աղզի գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
17. Թոքադի սանջաքի Նիքսարի կազային կից Կարա-մեզե գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1321 թ.։

(Շարունակելի)